

- 54 Իմացեալ ապայ Սարգիսն հանձարեղ,  
Թէ ծանօթք իւր ողջ է՝ ամիրայք շքեղ  
Չառեալ են բընաւ զիւր գիրս առ ետեղ  
Ընդդէմ սոյն ախտի եգիտ իսկ ըզգեղ:
- 55 Կա զի ինքն ընդ յոյնս անդ ըզկեանս վարէր,  
Ուստի միում՝ յայնց ըզթուղթս իւր յածձներ,  
Որ գայնս եղբօր իւր ի Պօլիս յըղէր,  
Էւ նա տեարց իւրեանց անդէն բաժանէր:
- 56 Կամակք օրհնութեան եւ քաջ համոզման  
Լի վիպօք վըշտաց չար պանդըխտութեան,  
Զոր Սարգիս գրէր առ մի մի իշխան,  
Շարժէին յայնչս սէրն ընկերական:
- 57 Որոց չեւ ժուժեալ եւ եւս ի լըսել,  
Յակօբու ճարեալ զանվըճար արգել,  
Ճեպէին ջանիւ ճարակ ճարտարել  
Առ յողջ աքսորից ըզՍարգիս փրկել:
- 58 Ղազար, Պետրոսն իսկ յայնժամ՝ զըղջացեալ՝  
Ոչ եւս անսային իբրեւ ըզխաբեալ  
Բանիցն Յակօբայ զոր գրտին կեղծեալ,  
Ուստի յայլ իշխանս լինէին յարեալ:
- 59 Կոյն նոքին իշխանք ժողովեալ յայնժամ,  
Ընդ գերծման Սարգսի խորհեալ համակամ,  
Ազգեն Յակօբու է՝ այն վերջին անգամ,  
Թողեալ պատճառանս տալ առ այն զիւր կամ:
- 60 Ըստիպեալ Յակօբ յորոշեալ բանից,  
Կոյն քաջահամբաւ պերճ ամիրայից,  
Ի ներքուստ թէպէտ լինէր տըխրալից,  
Այլ արտուստ մընայր նոցա կամակից: